ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **03 փետրվար 2020թ.**

2021 թվականի փետրվարի 2-ին ժամը 10:30-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի հերթական (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նիստը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Անդրանիկ Փիրոյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հաստատման Կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի 2020 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությանը:

Զեկուցող՝ Գեղամ Շախբազյան Տեսչական մարմնի ղեկավար:

2. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությանը:

Զեկուցող՝ Գագիկ Գիլոյան Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ:

3. Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 3-րդ, 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատումը:

Զեկուցող՝ Գագիկ Գիլոյան Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

Կառավարման խորհրդի քարտուղար Ն. Մկրտչյանը նախագահողին զեկուցեց, որ կառավարման խորհրդի անդամները նախապես՝ մեկ շաբաթ առաջ, էլեկտրոնային տարբերակով ստացել են օրակարգը և կից նյութերը:

Կառավարման խորհրդի անդամ Արթուր Ասոյանը առաջարկեց հաշվի առնելով այն հանգամանքն, որ Կառավարման խորհրդի անդամները նախապես ծանոթացել են օրակարգին և կից նյութերին, օրակարգի 2-րդ և 3-րդ հրացերը զեկուցողը ներկայացնի միաժամանակ: Կառավարման խորհրդի անդամները հավանության տվեցին Արթուր Ասոյանի առաջարկին: Օրակարգը հաստատելուց հետո Կառավարման խորրդի նախագահը խոսքը փոխանցեց ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (Տեսչական մարմին) ղեկավար Գեղամ Շախբազյանին օրակարգի առաջին հարցը ներկայացնելու համար:

Տեսչական մարմնի ղեկավար Գեղամ Շախբազյանը ներկայացրեց Տեսչական մարմնի 2020 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը: Հաշվետվությունը ներկայացվեց շնորհանդեսի ձևաչափով, մանրամասն՝ ըստ ոլորտների, անդրադառնալով Տեսչական մարմնի կողմից իրականացված միջոցառումների, բացահայտված խնդիրների, խնդիրներին տրված լուծումների վերլուծությանը: Օրակարգի առաջին հարցը ներկայացնելուց հետո Կառավարման խորհրդի անդամները հարցեր ուղղեցին զեկուցողին:

Կառավարման խորհրդի անդամ Արմեն Ղուլարյանը ողջունեց հաշվետվության ներկայացման ձևաչափը և կատարված աշխատանքը, որից հետո հարցրեց կատարված աշխատանքի արդյունքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարների վերաբերյալ, ոլորտում գործունեություն իրականացնող ոչ բարեխիղճ տնտեսավորողներին լիցենզիաների զրկման մասին:

Տեսչական մարմնի ղեկավար Գեղամ Շախբազյանը տեղեկացրեց, որ վարչարարության արդյունքում կիրառված վարչական պատասխանատվության արդյունքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարների մասին կպատրաստվի տեղեկանք և արձանագրության հետ կառաքվի խորհրդի անդամներին: Ոչ բարեխիղճ և օրինախախտ

տեսավարողներին լիցենզիաներից զրկման հետ կապված հարցին ի պատասխան, Գեղամ Շախբազյանը տեղեկացրեց, որ Տեսչական մարմինը գործող օրենսդրության համաձայան ներկայացրել է երկու միջնորդություն իրավասու մարմնին, որոնցից մեկը դեռ քննության ընթացքում է, իսկ մյուսով միջնորդությունը չի բավարարվել:

Կառավարման խորհրդի անդամ Վահե Դանիելյանն առաջարկեց զեկուցողին էներգետիկայի բնագավառում արձանագրված իրավախախտումների հաճախականությունը նվազեցնելու նպատակով համատեղ աշխատել քաղաքականություն մշակող մարմնի հետ, որպեսզի անհրաժեշտ օրենսդրական լուծումներով ապահովի էներգետիկայի ոլորտում օրենսդրական բացը և նվազեցվի վերստուգումների ընթացքում իրավախախատումների քանակը, քանի որ դրանք համաձայն հաշվետվության զգալի տոկոս են կազմում: Զեկուցողը իր պատասխանում կարևորեց ներկայացված առաջարկը և տեղեկացրեց, որ Տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսված է իրականացել ոլորտային ստուգաթերթերի փոփոխություններ, օրենսդրական դաշտում բարեփոխումների աշխատանք, որով արձանագրված խնդիրների արդյունավետ և հասցեական լուծումներ են ապահովելու:

Կառավարման խորհրդի նախագահ Անդրանիկ Փիլոյանն անդրադառնալով հրդեների դեպքերի արձանագրված 46% նվազման փաստին, հարցրեց, թե որոնք են նվազման պատճառները: Տեսչական մարմնի ղեկավար Գեղամ Շախբազյանը, պատասխանեց որ նվազման ցուցանիշը 2019 թվականի համեմատությամբ է միայն և Տեսչական մարմնին չեն փոխանցվել նախորդ տարիների հրդեհների պատճառների վերաբերյալ տեղեկատվական բազաներ: Մինչդեռ 2019, 2020 թվականների համեմատականով տեսանելի է նվազումը և դրանց պատճառներն են ինչպես եղանակային պայմանները, այնպես էլ համաճարակի և ռազմական դրությամբ պայմանավորված երկրում կիրառված սահմանափակումները: Միևնույն ժամանակ տեղեկացրեց, որ Տեսչական մարմինն իր կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում իրականացրել է իրազեկման լայնածավալ աշխատանք:

Կառավարման խորհրդի անդամ Սուրեն Թովմասյանն անդրադարձավ քաղաքաշինության ոլորտում 1500 ավարտական ակտերով տրված 766 բացասական եզրակացության դեպքերին, որոնց հետ կապված կարևորեց ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում Տեսչական մարմնի կողմից վերահսկողության իրականացումը:

Կառավարման խորհրդի անդամ Արթուր Ասոյանը բարձրացված հարցի վերաբերյալ կառավարման խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավարի հետ համատեղ նախաձեռնել են ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 912-Ն, ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին կառավարության որոշման նախագիծ, ինչը կդրվի շրջանառության մեջ: Առաջարկվող փոփոխությունների նախագծով նախատեսվում է քաղաքաշինության ոլորտում ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում ներառել նաև Տեսչական մարմնի կողմից դիրքորոշման ներկայացման պահանջը: Կառավարման խորհրդի անդամները դրական արձագանքեցին նախաձեռնությանը:

Կառավարման խորհրդի անդամ Արթուր Ասոյանը տեղեկացրեց նաև, որ տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում ևս առկա է օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն կապված ինչպես ոլորտային նորմատիվների, այնպես էլ քաղաքաշինության ոլորտում գործող ոչ արդիական նորմատիվային պահանջների հետ: Մասնավորապես նշեց, որ ուսումնասիրված և գործող 189 բենզալցկայաններից միայն 6-ն են շահագործվում գործող նորմատիվային պահանջներին համապատասխան՝ մասնավորապես խնդիրը վերաբերվում է միջտարածությունների պահպանմանը:

Արթուր Ասոյանը նշեց, որ ուսումնասիրվել է զարգացած երկրների փորձը, համաձայն որի միջտարածությունների պահպանման խնդրին տրված են առավել արդիական և անվտանգության առումով ապահով լուծումներ, որոնք պետք է կիրառել նաև Հայաստանի Հանրապետությունում: Իր խոսքում պարոն Ասոյանը նաև խնդրեց ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ և կառավարման խորհրդի անդամ պարոն Ղուլարյանին հայտնել դիրքորոշում շրջանառվող նախագծի վերաբերյալ:

Քննարկման ավարտից հետո Կառվարաման խորհրդի նախագահը օրակարգի առաջին հարցը դրեց քվեարկության: Կառավարման խորհրդի անդամները՝ 9 կողմ, 0 դեմ ձայնով հավանության արժանացրեցին Տեսչական մարմնի 2020 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը ներկայացրեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Գագիկ Գիլոյանը:

Օրակարգի 3-րդ հարցը քվեարկության դնելուց առաջ Կառավարման խորհդի անդամ Արթուր Ասոյանն առաջարկեց որակի ապհովման վարչության կատարողականի գնահատման ցուցիչների հետ կապված հստակեցումներ նախատեսել՝ համապատասխանեցնել այն ՀՀ կառավարության կողմից սահմանված ձևաչափին և քվեարկությունը կատարել վերապահումով:

Կառավարման խորհրդի անդամները և նախագահը՝ ընդունելով Արթուր Ասոյանի առաջարկը՝ 9 կողմ 0 դեմ ձայնով քվեարկեցին Օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերի համար:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1.Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի 2020 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությանը:

2. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությանը:

3. Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 3-րդ, 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատումը :

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ Ա. Փիլոյան
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ Ն.Մկրտչյան
ստորագրություն